

# **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

## **ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **ԱՐԹՈՒՐ ՎԱՐԱՐՇՅԱՆ**

Խորհրդարանական վերահսկողությունը և նրա ձևերի բազմազանությունը հիմնականում պայմանավորված են պետական կառուցակարգում խորհրդարանի տեղով ու դերով, պետական կառավարման ձևով (որպես կանոն՝ խորհրդարանական հանրապետություններում դրանք ավելի բազմազան են և գործուն), ինչպես նաև պետական կառավարման ռեժիմով: Հետևաբար՝ խորհրդարանական վերահսկողության ձևերի շրջանակը և դրանց արդյունավետությունը տարբեր երկրներում միատեսակ չեն: Ընդ որում, պատմականորեն նկատվում է այս ոլորտում խորհրդարանների իրավունքների սահմանափակման և գոյություն ունեցող վերահսկողության ձևերի օգտագործման կրճատման միտում<sup>1</sup>: Համաշխարհային խորհրդարանական պրակտիկային հայտնի են գործադիր իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողության հետևյալ ձևերը՝ կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների քննարկում, բյուջեի հաստատում և դրա կատարման նկատմամբ վերահսկողություն, խորհրդարանական հարցապնդումներ, հարցեր, դեբատներ, անվստահություն հայտնելու ընթացակարգ (ինտերպելյացիա), խորհրդարանի մշտական հանձնաժողովների և հատուկ քննիչ հանձնաժողովների վերահսկողական գործունեություն, խորհրդարանական լսումներ և պառլամենտական քննություն, կառավարության զեկուցումներ և հաշվետվություններ<sup>2</sup>: Փորձենք խորհրդարանի կանոնակարգի, խորհրդարանի նիստերի արձանագրությունների և արխիվային այլ նյութերի հետազոտման միջոցով պարզել, թե խորհրդարանական վերահսկողության ձևերից որն է նախատեսված եղել և գործել Առաջին հանրապետությունում:

**Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների քննարկումը և հաստատումը խորհրդարանում:** Կառավարությունն ընդհանրապես մեծ դեր է խաղում պետության արտաքին և ներքին քաղաքականության մշակման, ձևավորման և կենսագործման հարցերում: Ուստի միայն «գործադիր իշխանություն» ձևակերպումը չի արտահայտում կառավարական իշխանության բնույթը, քանի որ կառավարությունը, ըստ էության, որոշում և ղեկավարում է երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը, քաղաքացիական և զինվորական վարչությունը, երկրի պաշտպանությունը և այլ հարցեր: Այդ օրինաչափությունը բնորոշ էր նաև Առա-

<sup>1</sup> Տե՛ս «Конституционное право зарубежных стран». М., 2005, էջ 315:

<sup>2</sup> Տե՛ս **Енгибарян Р. В.** Сравнительное конституционное право. М., 2005, էջ 316-322, «Конституционное право зарубежных стран», էջ 315-318:

ջին հանրապետությանը: Նման եզրակացության հիմքը Հայաստանի խորհրդի, Հայաստանի պառլամենտի ու կառավարության փոխհարաբերությունների պատմությունն է, ինչը հիմք է տալիս պնդելու, որ կառավարությանն էր վերապահված երկրի կառավարման քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը և ընդհանուր ղեկավարությունը: Կառավարության՝ որպես գործադիր իշխանության մարմնավորողի հիմնական գործառույթը ընդհանուր քաղաքականության առաջարկությունն էր, դրա ձևակերպումը, ինվեստիտուրան խորհրդարանում և, անշուշտ, կենսագործումը կյանքում: Այդ գործառույթի իրականացման իրավաբանական ձևը նոր ձևավորվող կառավարության ղեկավարացիան էր (հայտագիրը, հայտարարագիրը, հռչակագիրը), որը՝ որպես կառավարության գործողությունների քաղաքական ծրագիր, հաստատվում էր խորհրդարանում<sup>3</sup>: Հայաստանի առաջին Հանրապետության հինգ կառավարություններից ղեկավարացիա՝ որպես կառավարության գործունեության քաղաքական ծրագիր, ունեցել են միայն առաջինը, երրորդը և հինգերորդը<sup>4</sup>:

Առաջին հանրապետությունում կառավարության ձևավորման եղանակը պայմանավորված էր հանրապետության կառավարման ձևով: Կառավարության ձևավորման ուղիներից հանրապետությունը որդեգրել էր խորհրդարանականը, երբ այդ գործընթացում վճռական դեր էր խաղում խորհրդարանը: Խորհրդարանը խորհրդարանական ֆրակցիաների առաջարկած թեկնածուին (թեկնածուներից) ընտրում էր վարչապետ, որը կազմում էր կառավարության անվանական կազմը և ներկայացնում էր խորհրդարանին ի գիտություն: Այնուհետև՝ վարչապետը կառավարության անունից խորհրդարանի հավանությանն էր ներկայացնում կառավարության գործունեության ծրագիրը՝ վստահության քվե ստանալու համար: Ծրագրի հաստատումը

---

<sup>3</sup> Ղեկավարացիաները, որպես կառավարության գործողությունների քաղաքական ծրագիր, ունեին հետևյալ կառուցվածքը. 1) ներածական մաս, որում նկարագրվում էր տվյալ պահի իրադրությունը, և վեր էին հանվում կառավարության գլխավոր խնդիրները՝ կապված տվյալ պահի և իրադրության հետ, 2) հիմնական մաս, որը կառավարության քաղաքական ծրագիրն էր՝ առաջարկված խորհրդարանին ու ժողովրդին: Այս մասում նախատեսվում էին հասարակական և պետական կյանքի համապատասխան ոլորտներում կառավարության կողմից նախատեսվող գործողությունների ծրագրերը, դրանց իրականացման ուղիները և միջոցները:

<sup>4</sup> **Առաջին կառավարության** (վարչապետ՝ Հ. Քաջազնունի, 1918 թ. հուլիս-օգոստոսից մինչև 1918 թ. նոյեմբեր) ղեկավարացիան հաստատվել է Հայաստանի նորաբաց խորհրդարանում 1918 թ. օգոստոսի 3-ին: Այդ ղեկավարացիան կարելի է որակել որպես պետության կառուցակարգի հիմնադրման և «նրա գոյությունն ապահովող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր»: **Երկրորդ կառավարությունը**, որը կոալիցիոն էր, չունեցավ ղեկավարացիա: Ընդդիմությունն այդ կառավարությանն անընդհատ մեղադրում էր ղեկավարացիա չունենալու և այն խորհրդարան չներկայացնելու մեջ: **Երրորդ կառավարությունը** (վարչապետ՝ Ա. Խատիսյան, 1919 թ. օգոստոսից մինչև 1920 թ. մայիսի 5) ղեկավարացիան մշակել և ներկայացրել էր Հայաստանի պառլամենտի հաստատմանը: **Չորրորդ կառավարությունը** (վարչապետ՝ Հ. Օհանջանյան, 1920 թ. մայիսի 5-ից մինչև 1920 թ. նոյեմբերի 24) ևս չունեցավ ղեկավարացիա: Այդ կառավարությունը հաստատվեց առանց ղեկավարացիայի: Ստանալով խորհրդարանի մանդատը՝ նա հանդես եկավ ՀՀ ազգաբնակչությանը ուղղված «կոչով»: Այդ կոչը կարելի է որակել «Հայրենիքի փրկության արտակարգ պայմանների ծրագիր», որն ընդամենը քաղաքական ցանկությունների հայտարարություն էր: **Հինգերորդ կառավարությունը**, որը ևս կոալիցիոն էր (վարչապետ՝ Ս. Վրացյան, 1920 թ. նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 2) մշակեց ղեկավարացիա և ներկայացրեց պառլամենտի հաստատմանը:

խորհրդարանի կողմից իրավաբանորեն եզրափակում էր կառավարության վերջնական հաստատումը՝ ինվեստիտուրան: Յետևաբար, կառավարության դեկլարացիայի խորհրդարանական ինվեստիտուրան խորհրդարանական վերահսկողության ձևերից մեկն էր: Այդուհանդերձ, կառավարության դեկլարացիան ավելի շատ քաղաքական փաստաթուղթ էր, քան իրավական: Այդ փաստաթղթի հիմնական նշանակությունը բնակչության լայն խավերի, իհարկե, նաև խորհրդարանական մեծամասնության առջև կառավարության հեղինակության և լեգիտիմության ապահովումն էր: Կառավարության դեկլարացիան գործուն իրավական նշանակություն գրեթե չուներ, քանի որ այն լուրջ իրավական հետևանքներ, իրավունքներ ու պարտականություններ չէր առաջացնում: Սակայն դեկլարացիան կարող էր հանգեցնել քաղաքական որոշակի լուրջ հետևանքների՝ երկու ուղղությամբ: Նախ դեկլարացիայի հաստատման, իսկ այնուհետև՝ կենսագործման ընթացքում, եթե հանկարծ կառավարությանն անվստահության քվե հայտնվեր կամ ընդունվեր պարսավանքի բանաձև:

#### **Վերահսկողությունը պատվիրակված օրենսդրության նկատմամբ:**

Առաջին հանրապետության պետական կառուցակարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ խորհրդարանի վերահսկողական լիազորությունների մեջ ավելանում էր նաև մեկը, այն է՝ պատվիրակված օրենսդրության նկատմամբ վերահսկողությունը: Քանի որ որոշակի ժամանակաշրջաններում և՛ Հայաստանի խորհուրդը, և՛ Հայաստանի պառլամենտն իրենց օրենսդիր իրավունքները հանձնում էին գործադիրին, ուստի կառավարությունը խորհրդարանի կողմից օրենսդիր լիազորություններով օժտելու ժամկետի լրանալով առաջանում էր այդ ժամանակաընթացքներում կառավարության՝ որպես «օրենսդիրի» գործունեության նկատմամբ վերահսկողության հիմնահարցը: Այսպես, Հայաստանի խորհուրդը 1919 թ. հունիսի 4-ին և 5-ին լսել է վարչապետի և նախարարների զեկուցումներն ապրիլի 27-ից մինչև հունիս ընկած ժամանակամիջոցի գործունեության վերաբերյալ: Երբ 1919 թ. օգոստոսին գումարվեց Հայաստանի պառլամենտը, կառավարությունը նորից զեկուցում ներկայացրեց խորհրդարանին իր երկամսյա (հունիս-հուլիս) գործունեության վերաբերյալ: Սակայն պառլամենտը չգնահատեց այդ գործունեությունը, այլ միայն ընդունեց հրաժարականը, թեպետ ընդդիմադիր սոցիալիստ-հեղափոխականները պահանջում էին դա: Այնուամենայնիվ, 1919 թ. օգոստոսի 15-ին խորհրդարանը դաշնակցական ֆրակցիայի պահանջով օրակարգի հարց է դարձնում «վերաքննության համար կառավարության հրատարակած օրենքները խորհրդարան բերելու» հարցը<sup>5</sup>: Արդեն օգոստոսի 24-ին խորհրդարանը, քննելով այդ հարցը, ընդունում է հետևյալ որոշումը. «Լիազորել օրենսդրական հանձնաժողովին պահանջել կառավարությունից սույն թվի ապրիլի 28-ից սկսած բոլոր հրատարակված օրենքները և դրանցից պառլամենտի քննության նյութ դարձնել այն օրենքները, որոնք օրենսդիր հանձնաժողովն անհրաժեշտ կգտնի»<sup>6</sup>: Այս հարցի կապակցությամբ սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիան առաջարկել էր մի բա-

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, Եր., 1919, օգոստոս, թիվ 124:

<sup>6</sup> «Հայաստանի պառլամենտի 1919 թ. օգոստոսի 24-ի արձանագրությունը», «Հայաստանի աշխատավոր», 1919, օգոստոս, թիվ 130:

նաձև (այն, իհարկե, չանցավ), որը պարտավորեցնում էր կառավարությանը երկու շաբաթվա ընթացքում ներկայացնել «պառլամենտին ի քննություն և ի հաստատություն բոլոր այն օրենքները», որոնք հրատարակված են ապրիլի 28-ից մինչև օգոստոսի 1-ը: Այսինքն՝ ընդդիմադիրները գտնում էին, որ կառավարական բոլոր օրենքներն անխտիր պետք է անցնեին խորհրդարանական հաստատման ընթացակարգ: Սակայն, ինչպես տեսանք, պատվիրակված օրենսդրության նկատմամբ վերահսկողությունը կիրառվեց ոչ թե կառավարության ընդունած բոլոր օրենքների նկատմամբ անխտիր, այլ միայն օրենսդրական հանձնաժողովի ընտրությամբ<sup>7</sup>: Օրենսդրական հանձնաժողովը, մոտ մեկ ամիս ուսումնասիրելով կառավարության ընդունած օրենքները, 1919 թ. հոկտեմբերի 1-ին խորհրդարանին զեկուցեց. «1919 թ. հունիսի 5-ից մինչև օգոստոսի 1-ը կառավարության հրատարակած օրենքներից 150-ը վերաքննության կարոտ չեն, իսկ 34 օրենքներ» հանձնաժողովը դարձրել է քննության առարկա, ուստի առաջարկում է ուղարկել համապատասխան հանձնաժողովների քննությանը: Առաջարկության շուրջ մտքերի փոխանակությունից հետո ներկայացված երեք բանաձևերից անցավ պատգամավոր Արդությանի առաջարկը. 34 օրենքները վերադարձնել նախագահությանը՝ բաշխելու համապատասխան հանձնաժողովներին, որոնք «իրենց եզրակացություններով կմտցնեն դրանք խորհրդարան, որպես նոր օրինագծեր»<sup>8</sup>: Հետաքրքիր է, որ կառավարությունը 1919 թ. ապրիլ-հուլիսի ընթացքում, երբ ուներ օրենսդրական լիազորություններ, ընդունել և հրապարակել էր ավելի քան 250 օրենք, սակայն օրենսդրական հանձնաժողովը քննել էր միայն 150-ը<sup>9</sup>:

Պատվիրակված օրենսդրության նկատմամբ վերահսկողության ինստիտուտը պետք է գործադրվեր նաև 1920 թ. երկրորդ կեսին: Կառավարությունը միայն 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին ընդունել էր «52 օրենքներ, անց էր կացրել 117 նախահաշիվների ու վարկերի օրինագծեր»<sup>10</sup>: Սակայն հետագա արտաքին-քաղաքական իրադարձությունների և պատվիրակված օրենսդրման ժամկետների երկարաձգման, իսկ այնուհետև հանրապետության անկման պատճառով խորհրդարանական վերահսկողության այդ ինստիտուտը չկիրառվեց:

**Հարցեր և հարցապնդումներ:** «Հայաստանի խորհրդարանի հրահանգի» 4-րդ գլխի 3-րդ բաժինը կարգավորում էր օրենսդրական բնույթ չունեցող գործերի քննության կարգը՝ որպես այդպիսին համարելով կառավարությանը կամ դրա որևէ անդամին ուղղված հարցերը և հարցապնդումները:

Կառավարության անդամներին ուղղված հարցերը կարող էին տրվել պատգամավորների կողմից՝ գրավոր ձևով խորհրդարանի նիստի բացումից մեկ ժամ առաջ: Խորհրդարանի նիստի նախագահողը նիստի վերջում հրապարակում էր հարցման (կամ պատգամավորների այլ հայտարարու-

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 58, ք. 38:

<sup>8</sup> «Հայաստանի պառլամենտի 1919 թ. հոկտեմբերի 1-ի նիստի արձանագրությունը», «Յառաջ», թերթ, Եր., 1919, հոկտեմբեր, թիվ 13:

<sup>9</sup> Տե՛ս «Հայաստանի պառլամենտի 1919 թ. հոկտեմբեր 10-ի նիստում վարչապետի տված բացատրությունը Ջավախիչի գործի մասին», «Յառաջ», 1919, թիվ 21-24:

<sup>10</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. օգոստոսի 2-ի նիստի արձանագրությունը», «Յառաջ», 4 օգոստոսի 1920, թիվ 164:

թյունների) բովանդակությունը: Եթե կառավարության կողմից չէր հետևում անհապաղ պատասխան, ապա հարցն ընդգրկվում էր հաջորդ նիստի օրակարգ<sup>11</sup>: Հարցերն օգտագործվում էին որպես տեղեկատվության միջոց, քանի որ դրանցով ելույթներ և քվեարկություն չէին անցկացվում: Սակայն խորհրդարանական վերահսկողության այդ ձևն Առաջին հանրապետությունում գործունե միջոց էր, որովհետև եթե հանկարծ հարցի հեղինակը մնար չբավարարված կառավարության բացատրությունից, ապա հարցումը կարող էր վերածվել հարցապնդման: Վերջինը կառավարության համար ավելի «վտանգավոր» ընթացակարգ էր: Խորհրդարանի աշխատանքի կառուցակարգում հարցերի համար հատուկ օրեր կամ նիստեր չէին նախատեսված: Դրանք ներառվում էին հերթական նիստերի օրակարգ՝ զուգատեղվելով հարցապնդումների հետ: Հարցին՝ կախված բնույթից, կարող էին պատասխանել կառավարության գլուխը կամ դրա առանձին անդամը: Առանձին դեպքերում մինչև մեկ հարցին պատասխանել են և՛ վարչապետը, և՛ նախարարները: Օրինակ, 1918 թ. հոկտեմբերի 11-ի նիստում նախապես տրված հարցին պատասխանել են վարչապետը, ներքին գործերի և զինվորական նախարարները՝ ամեն մեկն իր իրավասության առարկայի տեսանկյունից<sup>12</sup>: Հարցերի տարափոփ լի էին հատկապես Հայաստանի խորհրդի նիստերը, որում ընդդիմադիր կուսակցությունները գրեթե ամեն առիթ օգտագործում էին կառավարությանը զգաստացնելու և քննադատելու համար: Երբեմն մի նիստի ընթացքում լսվում էին և՛ հարցերի, և՛ հարցապնդումների պատասխանները: Ընդ որում, հաճախ մեկ նիստի ընթացքում տրվում էր մի քանի հարց: Այսպես՝ 1919 թ. հունվարի 4-ի նիստում ընդդիմության առանձին հարցերի պատասխանել են և՛ վարչապետը, և՛ զինվորական նախարարը<sup>13</sup>: Երբեմն նույն նիստում մեկ նախարարին ուղղվում էին երկու հարցումներ<sup>14</sup>:

Ի տարբերություն Հայաստանի խորհրդի՝ Հայաստանի պառլամենտում հարցումները (նաև հարցապնդումները) ավելի քիչ էին կիրառվում, որովհետև այստեղ ընդդիմադիր կեցվածք ունեին միայն սոցիալիստ-հե-

<sup>11</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 10, թ. 6, «Հայաստանի խորհրդարանի հրահանգ»-ի հոդված 76-77:

<sup>12</sup> Հարցը վերաբերում էր Դիլիջան-Ղարաքիլիսայի վարչական բաժանման և կառավարման հիմնախնդրին (տե՛ս «Ձանգ», թերթ, Եր., 1918, հոկտեմբեր, թիվ 68):

<sup>13</sup> Վարչապետին հարցով դիմել էր սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիայի պատգամավորը՝ հետաքրքրվելով, թե ինչու կոալիցիոն կառավարությունը մինչև օրս չի հայտարարում իր դեկլարացիան, ինչին վարչապետը պատասխանել էր. «Նախ՝ 9-ը նախարարներից 4-ը բացակայում էին, հետևապես և ամբողջական դեկլարացիա կազմել հնարավոր չէր. ապա՝ թուրքերը սկսեցին դատարկել մեր երկիրը. այդ միջոցին մեծ աշխատանք էր պահանջվում կառավարությունից և վերջապես 3-րդ պատճառն այն էր, որ սկսվեց հայ-վրացական կոնֆլիկտ, որ իրեն էր գրավել կառավարության ուշադրությունն ամբողջովին: Այն կասկածը, որ ունի իր մեջ հարցումը, այսինքն՝ կառավարությունը արժեք չի ուզում տալ խորհրդին և բարձրից է նայում նրա վրա՝ սխալ է և անտեղի, քանի որ նման դեֆեկտները առաջանում են մեկ այլ պատճառով, որ ինչպես ասացի, ժամանակ չի ունենում կառավարությունը, մեկ էլ, որ դրանք ձևական խնդիրներ են»: Չինվորական նախարարին դիմել էր սոցիալ-դեմոկրատական կուսակցության ֆրակցիայի անդամը «մահապատժի» վերացման մասին հարցումով: Նախարարը պատասխանում է, որ կառավարությունը ղեկավարվում է ռուսական հին օրենքներով, որոնք զինվորական գործի մեջ որոշ դեպքերում թույլատրում են մահվան պատիժ (տե՛ս «Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 4-ի նիստի արձանագրությունը», «Ձանգ», 1919, հունվար, թիվ 8):

<sup>14</sup> Տե՛ս «Հայաստանի պառլամենտի 1920 թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրությունը», ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 8:

ղափոխական ֆրակցիան՝ իր չորս պատգամավորով և «Արագածոտնի անկուսակցական գյուղացիական միության» միակ պատգամավորը:

Հարցապնդումները (ինտերվյուսցիա), ըստ «Հայաստանի խորհրդարանի հրահանգի» 79 հոդվածի, պետք է վերաբերեին կառավարության կամ նրան ենթակա պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններին և գրավոր կերպով հանձնվեին խորհրդարանի նիստից 24 ժամ առաջ առնվազն երեք պատգամավորի ստորագրությամբ: Նիստի վերջում նախագահողը դրանք հրապարակում էր: Հարցապնդման առթիվ խորհրդարանական վիճաբանությունները սկսվում էին հարցապնդումը ստորագրած պատգամավորներից մեկի ելույթով, որին հետևում էր կառավարության պատասխանը: Երկու խորհրդարանների դիվանների արխիվային նյութերի հետազոտությունը ցույց է տալիս, որ գրավոր հարցապնդումները հասցեագրված էին խորհրդարանի նախագահությանը և այն գործադիր մարմնին, որի իրավասությանն էր վերապահված հարցապնդման առարկան: Խորհրդարանի դիվանը հարցապնդումները (հարցերը) ուղարկում էր վարչապետին և համապատասխան մարմնին՝ ի գիտություն, որպեսզի նրանք պատրաստվեին պատասխանելու համար:

Եթե խորհրդարանի նիստում հրապարակված հարցապնդմանը կառավարությունն անմիջապես պատասխան չէր տալիս, ապա նախագահողը հայտարարված հարցապնդումը ներառում էր խորհրդարանի հերթական նիստերից մեկի օրակարգ, բայց խորհրդարանի նիստում հարցապնդումը հրապարակելու պահից ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում<sup>15</sup>: Այսպես, 1919 թ. հոկտեմբերի 3-ի նիստում զինվորական նախարարը պատասխանել է սոցիալիստ-հեղափոխական պատգամավորների «զինվորադաշտային դատարանների գործունեության մասին» հարցապնդումին: Նախարարի պատասխանը, ըստ էության, բավարարում է ընդդիմադիր ֆրակցիային, որի ներկայացուցիչը հայտարարում է, որ իրենք բավարարված են նախարարի բացատրությամբ: Հարցապնդման առթիվ խորհրդարանն ընդունում է հետևյալ որոշումը. «Խորհրդարանը՝ զինվորական մինիստրի պատասխանը սոցիալիստ-հեղափոխականների հարցապնդմանը գտնում է բավարար և անցնում է հերթական հարցերին»<sup>16</sup>: Հարցապնդման առթիվ խորհրդարանի որոշումները երբեմն պարունակում էին հանձնարարականներ՝ ուղղված Նախարարների խորհրդին<sup>17</sup>: Օրինակ, Հայաստանի խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 3-ի նիստում քննարկված հարցապնդման կապակցությամբ

<sup>15</sup> Ինտերվյուստի՝ հարցապնդման հեղինակի կողմից հարցապնդումը կարող էր հայտարարվել շտապողական: Եթե խորհրդարանը քվեարկությամբ ճանաչում էր դրա շտապողական բնույթը, ապա հարցապնդումը պետք է դրվեր քննարկման հարցապնդման հայտարարման օրվանից 5 օրվա ընթացքում: Հարցապնդման շտապողականության վերաբերյալ թույլատրվում էր երկու ելույթ՝ մեկը կողմ, մյուսը դեմ, յուրաքանչյուրը 10 րոպե տևողությամբ (տես «Հայաստանի խորհրդարանի հրահանգի» 82 հոդվածը):

<sup>16</sup> «Հայաստանի պառլամենտի 1919 թ. հոկտեմբերի 3-ի նիստի արձանագրությունը», «Յառաջ», 1919, թիվ 15:

<sup>17</sup> Այսպես, 1919 թ. հոկտեմբերի 28-ին խորհրդարանը, լսելով խնամատարության և աշխատանքի նախարար Ա. Սահակյանի պատասխանը «Հողային հատուկ օրենքի գործադրման մասին» հարցապնդումին, ընդունել է նման բնույթի որոշում (տես «Հայաստանի պառլամենտի 1919 թ. հոկտեմբերի 28-ի նիստի արձանագրությունը», «Յառաջ», 1919, թիվ 32):

խորհրդարանն ընդունել է հետևյալ բանաձևը. «Առաջարկել կառավարությանը կտրուկ միջոցներ ձեռք առնել անարխիայի դեմ կռվելու համար»<sup>18</sup>:

Հարցապնդման ընթացակարգի ելքով շահագրգռված ֆրակցիաները կարող էին առաջարկել որոշման բանաձևեր: Այսպես, Հայաստանի պառլամենտի 1920 թ. փետրվարի 20-ի նիստում խորհրդարանը լսել է ներքին գործերի նախարար Գյուլխանդանյանի պատասխանը սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիայի հարցապնդմանը, որը վերաբերում էր տարեսկզբին ձերբակալված մեծամասնականներին: Որոշման բանաձևեր են առաջադրում դաշնակցական ֆրակցիան, սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիան և «Արագածոտնի անկուսակցական գյուղացիական միության» պատգամավոր Ար. Մելիքյանը: Անցնում է դաշնակցական ֆրակցիայի բանաձևը. «Լսելով ներքին գործերի նախարարի պատասխանը սոցիալիստ-հեղափոխականների հարցապնդմանը՝ պառլամենտը գտնում է այդ պատասխանը բավարար և անցնում է հերթական հարցերին»<sup>19</sup>:

Հարցապնդումների կապակցությամբ ընդունված խորհրդարանական որոշումների մեջ հանդիպում են նաև այնպիսիք, որոնցով խորհրդարանը հարցապնդման առարկայի վերաբերյալ հանձնարարականներ էր տալիս համապատասխան մշտական հանձնաժողովին՝ պարտադրելով հետագայում զեկուցել այդ մասին խորհրդարանին: Այսպես, 1918 թ. դեկտեմբերի 27-ի նիստում լսելով պարենավորման նախարարի պատասխանը հարցապնդմանը՝ խորհրդարանը հանձնարարեց պարենավորման հանձնաժողովին քննել պարենավորման բաժանմունքի հաշիվները և զեկուցել<sup>20</sup>: Դրանով իսկ մշտական հանձնաժողովին վերապահվեց քննիչ հանձնաժողովի իրավագործություն:

Այսպիսով, հարցումները և հատկապես հարցապնդումները, որպես խորհրդարանական վերահսկողության ձև, կառավարության համար ամենավտանգավոր փորձաքարերն էին, որովհետև դրանց հետևանքը կարող էր լինել խորհրդարանի կողմից գործադիրին անվստահություն հայտնելը, ինչին հետևելու էր կառավարության հրաժարականը: Խորհրդարանական աշխատանքի այս ձևերը Հայաստանի խորհրդում օրինագծերից հետո ամենաշատ ժամանակն էին խլում: Հատկապես որ դրանք ընդգրկվում էին ընթացիկ նիստերի օրակարգ: Հարցումներն ու հարցապնդումները, որոնք ուղղվում էին կառավարությանը, բավականին շատ էին և վերաբերում էին գլխավորապես կառավարության և պետական կառուցակարգի աշխատանքում նկատվող թերություններին<sup>21</sup>:

<sup>18</sup> «Հայաստանի խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 3-ի նիստի արձանագրությունը», «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, Եր., 1918, թիվ 5:

<sup>19</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրությունը», ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 8:

<sup>20</sup> Տե՛ս «Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը», «Ձանգ», 1919, հունվար, թիվ 6:

<sup>21</sup> Մամուլի հրապարակումներից մեկում հայտնաբերվեցին տվյալներ այն մասին, որ խորհրդարանը որոշել էր հատուկ նիստեր նվիրել միայն հարցումներին ու հարցապնդումներին: Դա պայմանավորված էր նրանով, որ աշխատանքի այդ ձևերը ծանրացնում էին խորհրդարանի աշխատանքները, և, բացի այդ, սովորաբար, երևի նաև հատուկ դիտավորությամբ ներառվելով օրակարգի հարցերի ամենավերջում, հարկավոր մանրակրկիտությամբ քննության չէին ենթարկվում (տե՛ս «Ձանգ», 1918, հոկտեմ-

Պետք է ասել, սակայն, որ ընդդիմությունը երբեմն չափն անցնում էր և ամեն մի փոքր խախտում կամ հիմնախնդիր շոշափող հարց կարող էր դարձնել հարցման կամ հարցապնդման առարկա՝ թեկուզ հարցն իր էությանը արժանի չէր խորհրդարանի ուշադրությանը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի խորհրդի օրակարգերում հարցապնդումների առատությունը զգաստացնում ու զգոնացնում էր կառավարությանը, որը, խորհրդարանում չունենալով կայուն մեծամասնություն, ամենայն պատասխանատվությամբ էր վերաբերվում դրանց, իսկ դաշնակցական ֆրակցիան ուշադիր հետևում էր, որ ընդունված բանաձևերը չլինեին ի վնաս գործադիրի: Դրա շնորհիվ 1918 թ. հարցերն ու հարցապնդումներն ավարտվում էին առանց էական միջադեպերի, սովորական դարձած որոշումներով (համարել բավարար, անցնել հաջորդ հարցերին): Սակայն 1918 թ. հոկտեմբերից իրավիճակը բարդացավ, որովհետև Հայ ժողովրդական կուսակցության պատգամավորները ուժեղացրել էին իրենց ընդդիմադիր կեցվածքը: Նոյեմբերին ստեղծված կոալիցիան դաշնակցությանը փրկեց կրախից: Հայաստանի պառլամենտում արդեն իրավիճակն այլ էր: Հարցումներն ու հարցապնդումները կորցրել էին իրենց իրական ազդեցությունը, որովհետև դաշնակցությունն ուներ կայուն և բացարձակ մեծամասնություն: Այդուհանդերձ, ընդդիմությունը նույնիսկ այդ ամեյանելի պայմաններում խորհրդարանական ամբիոնն օգտագործում էր հարցերի և հարցապնդումների միջոցով քարոզչություն կամ քաղաքական խնդիրներ լուծելու համար:

**Անվստահության քվե:** Կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության կարևորագույն ձևերից են անվստահության քվեի հարցի բարձրացումը և պարսավանքի բանաձևի կայացումը: Սովորաբար այս ձևերը կիրառվում են խորհրդարանական հանրապետություններում և խորհրդարանական միապետություններում, երբեմն նաև կիսանախագահական հանրապետություններում<sup>22</sup>: Առաջին հանրապետության խորհրդարանների իրավական կարգավիճակի հետազոտությունը հաստատում է, որ այդ խորհրդարանները բացարձակ ինքնիշխան էին: Այսինքն՝ այստեղ գործում էր խորհրդարանի առջև «կառավարության պատասխանատվության» սկզբունքը, իսկ դա ենթադրում է կառավարության, այսպես կոչված, «պատասխանատու կառավարումը»: Խորհրդարանը ընտրությամբ լիազորելով վարչապետին կազմել կառավարություն, վստահելով նրան, միաժամանակ իրավունք ուներ հրաժարվելու այդ վստահությունից կամ կայացնելու «պարսավանքի բանաձև»: Այդ դեպքում կառավարությունը պետք է հրաժարական տար: Այսպիսով, խորհրդարանական հանրապետություններում պառլամենտներն ունեն կառավարության հրաժարականին հասնելու երկու շատ գործուն լծակ, եթե կառավարող քաղաքական մեծամասնության ձայների քանակը գերակշռող չէր, այլ հարաբերական մեծամասնություն էր կազմում:

բեր, թիվ 63): Սակայն, ինչքանով ցույց են տալիս երկու խորհրդարանների օրակարգերի ուսումնասիրությունները, աշխատանքի այդ ձևը չարմատավորվեց խորհրդարանում: Միայն Հայաստանի պառլամենտի 1920 թ. հունվարի 8-ի նիստն էր ամբողջովին նվիրված հարցապնդումներին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 12-13):

<sup>22</sup> Տե՛ս «Конституционное право зарубежных стран». М., 2005, тз 317, **Енгибарян Р. В.**, նշվ. աշխ., էջ 302:



Կայի՞ն արդյոք այս երկու ինստիտուտները Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանների և կառավարության փոխհարաբերություններում: Սկզբից փաստենք, որ երկու ինստիտուտներն էլ չունեին ուղղակի իրավական ամրագրում բուն հանրապետական օրենքներում: Այդ ինստիտուտները չէին անցել հանրապետությանը նաև հին իրավական համակարգից, որովհետև կայսերական Ռուսաստանի կառավարման ձևն ավելի շատ դուալիստական միապետություն էր, որում նախարարները մինիստր-նախագահի գլխավորությամբ հաշվետու էին կայսեր, այլ ոչ թե խորհրդարանի առջև (այն ժամանակներում, երբ գործում էր Պետական դուման): Մեզ մնում է արխիվային նյութերի հետազոտությունից քաղել այս երկու ինստիտուտների առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստերը:

Կառավարությանն անվստահություն հայտնելու ինստիտուտը հանրապետությունում չի գործել: Ո՛չ խորհրդարանի կանոնակարգը, ո՛չ էլ այլ իրավական ակտ խորհրդարանի համար չէր նախատեսել այդ հնարավորությունը: Այն, որ խորհրդարանական ուժերն իրավունք չունեին բարձրացնելու կառավարությանն անվստահության քվե հայտնելու հարցը, հաստատում են նաև այդ մարմինների՝ մեզ հասած համառոտ, կցկտուր արձանագրությունները: Մենք արդեն տեսանք, որ ընդդիմադիր ֆրակցիաները բավականին շատ էին օգտագործել կառավարությանն ուղղված հարցերն ու հարցապնդումները, բայց երբեք չէին բարձրացրել կառավարությանն անվստահություն հայտնելու հարց: Հայաստանի խորհրդի գործունեության շրջանում, իհարկե, վտանգ կար, որ այդ ինստիտուտի վերագրումը խորհրդարանին կարող էր հանգեցնել նաև կառավարության կողմից խորհրդարանն արձակելու ինստիտուտի յուրացմանը՝ որպես հակակշիռ, իսկ այդ դեպքում հիմնական «տուժողը» լինելու էին Հայաստանի խորհրդի «ընդդիմադիր» ֆրակցիաները, որոնք բուն Հայաստանում չունեին ամուր և իրական սոցիալական հիմք: Այդ են հաստատում հենց 1919 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Ինչ վերաբերում է «պարսավանքի բանաձևին»՝ որպես խորհրդարանական վերահսկողության ձևի, ապա այն, որպես հանրաճանաչ կարգ, ընդունված է եղել, և ընդդիմությունը հաճախ հենց դրա միջոցով էր ուզում հասնել կառավարության հրաժարականին: Սովորաբար «պարսավանքի բանաձևերը» ընդունվում են կառավարական գործունեության որոշակի ոլորտի կամ միջոցառումների կապակցությամբ: Բանաձևն առաջադրում է ընդդիմությունը, որը կառավարության կամ նրա որևէ անդամի գործունեությունը գնահատում է անբավարար: Եթե հանկարծ կառավարող կուսակցության որոշ պատգամավորներ միանում են ընդդիմությանը, ապա բանաձևը կարող է ընդունվել: Այդ բանաձևի ընդունումը, այսինքն՝ անվստահությունը մեկ նախարարի կամ որևէ կոնկրետ ոլորտի իրավիճակի համար սովորաբար նշանակում է անվստահություն ամբողջ կառավարությանը: Ե՛վ Հայաստանի խորհրդի, և՛ Հայաստանի պառլամենտի գործունեության հետազոտությունը ցույց է տալիս, որ «պարսավանքի բանաձևը» Առաջին հանրապետությունում ընդունված է եղել, և ընդդիմադիրները շատ հաճախ փորձել են դրա միջոցով «անբավարար» գնահատել վարչապետի կամ կառավարության որևէ այլ անդամի գործու-

նությունը և հասնել հրաժարականի: Նույնիսկ զարմանալ կարելի է այն համառության վրա, որով ընդդիմադիր կուսակցություններն ամեն օր, ամեն ժամ և ամեն ինչ օգտագործում էին այդ նպատակին հասնելու համար: Ընդ որում, Առաջին հանրապետության խորհրդարանների կանոնակարգերը նախատեսում էին հարցեր և հարցապնդումներ: Հարցը երբեմն կարող էր վերածվել հարցապնդման: Երկու խորհրդարանների գործունեության ընթացքում գումարված նիստերի մեծագույն մասի օրակարգերում եղել են կառավարությանն ուղղված հարցեր ու հարցապնդումներ: Ընդ որում, և՛ ընդդիմությունը, և՛ իշխանական ուժերը նախապես շատ լավ պատրաստվում էին դրանց՝ մշակելով իրենց կողմից ներկայացվելիք բանաձևերը: Պարզ է, որ ընդդիմությունը՝ «պարսավանքի», իսկ իշխանությունը՝ «բավարարվածության»: Իհարկե, այս ինստիտուտն արդյունավետ էր Հայաստանի խորհրդում, որտեղ պատգամավորական 46 ձայնից դաշնակցությունն ուներ ընդամենը 18-ը: Հայաստանի պառլամենտում խորհրդարանական վերահսկողության այս ձևն ինչ որ առումով անիմաստ էր: Բայց միակ ընդդիմադիր ուժը՝ սոցիալիստ-հեղափոխականները, որոնք ունեին բացարձակ փոքրամասնություն, անդադրում օգտագործում էին ամեն հնարավորություն՝ հասնելու «պարսավանքի բանաձևի» ընդունմանը՝ անշուշտ հասկանալով, որ դա անիրականանալի խնդիր է: Մինչդեռ Հայաստանի խորհրդում երբեմն իրավիճակն այնպես էր սրվում, որ հնարավոր էր դառնում «պարսավանքի բանաձևի» ընդունումը: Շատ դեպքեր են եղել, հատկապես 1918 թ., երբ դաշնակցական իշխանությունը մազից է կախված եղել: Օրինակ՝ 1918 թ. հոկտեմբերի 18-ի նիստում խորհրդարանի քննիչ հանձնաժողովի ներկայացուցիչ Գ. Ենգիբարյանը «զեկուցում է Էջմիածնի դրության մասին»: Նա «բազմաթիվ փաստաթղթեր է կարդում, որոնք ապացուցանում են, որ մեր երկրում տիրում է կատարյալ քաոս, անարխիա և չի հաստատված տարրական իրավակարգ: Ավազակությունը, թալաններն ու կողոպուտները մնում են անպատիժ, իսկ բողոքողներին անխնա ծեծում են և բանտարկում: Չկա ոչ մի օրենք ռեկվիզիցիայի, զինվորական դրության ձևի մասին: Ի վերջո, անում է մի քանի կոնկրետ առաջարկներ, երկիրը կորստից փրկելու համար»<sup>23</sup>: Այստեղ բուռն վիճաբանություններից հետո դաշնակցականներին մի կերպ, ընդամենը 17 ձայնով, հաջողվում է անցկացնել իրենց բանաձևը. այն, ընդ որում, ոչ թե չպարսավելու բանաձև էր, այլ ընդամենը որոշում, որով «խորհուրդը հանձնաժողովի (քննիչ - Ա. Վ.) առաջարկները հանձնում է համապատասխան հանձնաժողովներին ու անցում է օրակարգի մյուս հարցերին»: Այսպիսով, Հայ հեղափոխական դաշնակցության բանաձևը չէր հավաքել նույնիսկ իր ֆրակցիայի բոլոր 18 ձայնը: Եթե չձևավորվեր կոալիցիոն կառավարություն, ապա իրավիճակն այլ ընթացք կստանար. շատ հնարավոր է, որ կառավարությունն արժանանար «պարսավանքի բանաձևի» ու ստիպված հրաժարական տար:

**Պառլամենտական քննարկումներ:** Կառավարության ընդհանուր քաղաքականության կամ կոնկրետ հարցերով քննարկումները (դեբատներ-

<sup>23</sup> «Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 18-ի նիստի արձանագրությունը», «Կառավարության լրաբեր», 1918, թիվ 5:

րը) որպես այդպիսին՝ նախատեսված չէին խորհրդարանի աշխատակարգը կանոնակարգող նակագով և ոչ էլ կիրառվել են պրակտիկայում<sup>24</sup>:

**Կառավարության, նախարարների զեկուցումները և հայտարարությունները խորհրդարանում:** Ինչպես Հայաստանի խորհրդի, այնպես էլ Հայաստանի պառլամենտի առաջին գումարման ժամանակ կառավարությունները հաստատման էին ներկայացնում իրենց դեկլարացիաները, որի ընթացքում խորհրդարանում ծավալվում էին լայն բանավեճեր: Պատգամավորները գնահատական էին տալիս կառավարության ամբողջ քաղաքականությանը կամ դրա առանձին կողմերին: Սակայն, բացի սրանից, գործադիր իշխանությունը հաշվետու էր խորհրդարանի առջև այլ ձևերով՝ մասնավորապես՝ զեկուցումներ կամ հայտարարություններ անելով: Խորհրդարանական վերահսկողության այս ձևերի կարգավորման (կիրառման) որևէ ընդհանուր կարգ չկար: Սակայն երկու խորհրդարանների պրակտիկայում էլ այն, ըստ անհրաժեշտության, կիրառվում էր: Խորհրդարանների գործունեության հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանց հիմնական մասի նախաձեռնողը կառավարությունն էր կամ խորհրդարանի նախագահությունը: Կառավարությունը վարչապետի կամ առանձին նախարարի զեկուցմանը դիմում էր պատասխանատու կառավարության տպավորություն թողնելու համար կամ էլ պատասխանատու պահերին՝ խորհրդարանից գործունեության հրահանգներ ստանալու համար: Երկու խորհրդարանների օրակարգերում էլ կային այդ ձևերը, սակայն դրանք հատկապես շատ էին Հայաստանի խորհրդի գործունեության ընթացքում: Բացի քանակական տարբերություններից, երկու խորհրդարանների վերահսկողական գործունեության այս ձևերի կիրառման միջև կան նաև որակական տարբերություններ: Ուստի փորձենք դրանք հետազոտել առանձին-առանձին:

Հայաստանի խորհրդի նիստերում հանդիպում են գործադիրի հաշվետվության հետևյալ ձևերը՝ վարչապետի (կամ կառավարության) զեկուցումը, վարչապետի (կամ կառավարության) հայտարարությունը (հաղորդագրությունը), նախարարի զեկուցումը, ինչպես նաև նախարարի (հիմնականում արտաքին) հայտարարությունը:

Հայաստանի խորհրդի գործունեության ընթացքում հանդիպում ենք կառավարության հայտարարությունների, օրինակ՝ 1918 թ. հոկտեմբերի 22-ի, 23-ի, 25-ի նիստերում հայտարարություններ է արել կառավարության գլուխը՝ վարչապետը: Հայտարարությունները նվիրված էին արտաքին քաղաքական իրադրությանը և կառավարության ձեռնարկած քայլերին: Որոշ դեպքերում կառավարությունը խորհրդարանից խնդրում էր գործողությունների հրահանգներ: Օրինակ՝ 1919 թ. հոկտեմբերի 25-ի նիստում հաղորդագրության վերջում վարչապետն առաջարկում էր հրավիրել հայ-վրացական կոնֆերանս և քննարկել բոլոր վիճելի հարցերը: Խորհրդարանը կարծիքների փոխանակությունից հետո ընդունում է հետևյալ բանաձևը.

<sup>24</sup> Դեբատները նախաձեռնում են, որպես կանոն, խորհրդարանականները (որոշակի թվով) կամ ինքը՝ կառավարությունը: Դեբատների արդյունքում գործադիր իշխանության գործունեության գնահատման որոշումներ չեն կայացվում (տես **Енгибарян Р. В.**, նշվ. աշխ., էջ 316):

«խորհրդարանը առաջարկում է կառավարությանը հայ-վրաց խնդիրը խաղաղ ճանապարհով վերջացնելու համար բանակցություններ սկսել վրաց կառավարության հետ կոնֆերանս գումարելու, սահմանների որոշման համար»<sup>25</sup>: Կարելի է եզրակացնել, որ հայտարարություններն ու հաղորդագրություններն արվում էին այն դեպքերում, երբ կառավարությունն անհրաժեշտ էր գտնում խորհրդարանին տեղյակ պահելու ինչ-ինչ իրադարձությունների մասին կամ խնդրում էր ստեղծված իրավիճակում ուղղորդող հրահանգներ, գործողությունների դիմելու սանկցիա տալ<sup>26</sup>: Իսկ զեկույցները կատարվում էին գործադիր կամ գործադիր կառավարման այլ մարմինների արդեն իրականացրած քայլերի կամ միջոցառումների մասին և այդ կապակցությամբ ստանում խորհրդարանի հավանությունը<sup>27</sup>:

<sup>25</sup> Խորհրդարանը միաժամանակ որոշեց այս փաստաթղթի ընդունման առթիվ Հայաստանի խորհրդի կողմից ողջույնի հեռագիր ուղարկել Վրաստանի պառլամենտին (տե՛ս «Հայաստանի խորհրդի հեկտեմբերի 25-ի նիստի արձանագրությունը», «Կառավարության լրաբեր», 1918, թիվ 17):

<sup>26</sup> Օրինակ՝ Հայաստանի խորհրդի օրակարգում հայտնաբերել ենք տասնյակից ավելի հայտարարություններ ու հաղորդագրություններ, որոնք արվել են խորհրդարանում կառավարության գլխի կամ նախարարների (հիմնականում արտաքին գործերի) կողմից (տե՛ս, օրինակ, Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 22-ի, 23-ի, 25-ի, դեկտեմբերի 16-ի նիստերը, ինչպես նաև Հայաստանի խորհրդարանի 1919 թ. օգոստոսի 15-ի, 16-ի, 1920 թ. փետրվարի 16-ի նիստերը): Այսպես, 1918 թ. դեկտեմբերի 16-ի նիստում Հայաստանի խորհուրդը, լսելով և քննարկելով վարչապետի հաղորդումը հայ-վրացական հարաբերությունների մասին, քվեարկությամբ ընդունել է դաշնակցական ֆրակցիայի բանաձևը. «Լսելով կառավարության ձեռք առած միջոցառումները Ախալքալաքի և Բորչալուի շրջաններից վրաց զորքերը հեռացնելու և Բորչալուի հայ ազգաբնակչությունը վրաց զորքի բռնությունից ազատելու մասին, խորհրդարանը հավանություն է տալիս կառավարության արած քայլերին: Այս միշտ կողմնակից լինելով հայ-վրացական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելուն և սկզբունքով համաձայն լինելով կապիտան Գրինի առաջարկին, Հայաստանի խորհուրդն անհնարին է համարում մեր զորքերի հեռացումը, մինչև որ չերաշխավորվի Հայաստանի անվիճելի մասը կազմող Բորչալուի գավառի ապահովությունը վրաց զորքից: Խորհրդարանը հրահանգ է տալիս կառավարությանն այս հիմքերի վրա հատուկ պատվիրակության միջոցով բանակցություններ վարել կապիտան Գրինի և եթե հարկ լինի, նաև Վրաստանի կառավարության հետ» («Զանգ», 1919, հունվար, թիվ 2): Նույն կերպ էր նաև Հայաստանի պառլամենտում: 1920 թ. նոյեմբերի 11-ի արտակարգ նիստում լսելով կառավարության հաղորդագրությունը առաջացած ծանր իրավիճակի մասին (ընթանում էր հայ-թուրքական պատերազմը) և քննարկելով այն՝ պառլամենտն ընդունել է հետևյալ որոշումը. «Լսելով կառավարության հաղորդագրությունը և հավանություն տալով նրա վարած քաղաքականությանը, պառլամենտը հրահանգում է լարել իր բոլոր ուժերը՝ ապահովելու համար երկրի պաշտպանության գործը: Միաժամանակ հանձնարարում է պառլամենտի նախագահությանը կոչ անել ժողովրդին» («Հայաստանի պառլամենտի 1920 թ. նոյեմբերի 11-ի նիստի արձանագրությունը», «Յառաջ», 1920, նոյեմբերի 17, թիվ 252):

<sup>27</sup> Օրինակ՝ Հայաստանի խորհրդի օրակարգերում հայտնաբերել ենք վարչապետի (կառավարության) և նախարարների զեկուցումներ, որոնք տրվել են խորհրդարանին: Այդ զեկուցումները կարելի է դասել երկու խմբի. առաջին՝ օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությունների զեկուցումներն այն դեպքերում, երբ լրանում էին կառավարությանը օրենսդիր լիազորություններով օժտելու ժամկետները: Այդպիսի զեկուցումներ վարչապետը տվել է 1919 թ. հունիսի 4-ին և 5-ին, օգոստոսի 1-ին (որոշ վերապահումներով է զեկուցում, որովհետև դրան հաջորդել է կառավարության հրաժարականը), 1920 թ. հունիսի 5-ին, օգոստոսի 2-ին: Երկրորդ զեկուցումներ, որ տվել են վարչապետը և նախարարները խորհրդարանների գործունեության ընթացքում և նպատակաուղղված են եղել կառավարության կատարած ինչ-ինչ քայլերի, ծրագրերի մասին խորհրդարանին տեղյակ պահելուն և միաժամանակ նրանից հավանություն ստանալուն: Օրինակ՝ վարչապետի զեկուցումը խորհրդարանում 1920 թ. ապրիլի 3-ին (Զանգեզուրի և Ղարաբաղի դեպքերի մասին), արտաքին գործերի նա-

Այսպիսով, Առաջին հանրապետությունում կառավարության և նրա անդամների զեկուցումներն ու հաղորդագրությունները խորհրդարանին եղել են խորհրդարանական վերահսկողության գործող ձևեր: Դրանք կիրառվել են և առաջին (մեծ մասամբ), և՛ երկրորդ խորհրդարանում: Խորհրդարանական վերահսկողության այդ ձևերի նշանակությունը զուտ տեղեկատվական չէր, քանի որ խորհրդարանն ամեն անգամ ընդունում էր «հավանության» կամ «հանձնարարության» բանաձևեր: Ակնհայտ է, որ ընդդիմության տեսակարար կշռի էական լինելու պարագայում ընթացքը կարող էր հանգեցնել նաև «պարսավանքի բանաձևի», որին հետևելու էր կառավարության հրաժարականը:

**Խորհրդարանական լսումներ:** Խորհրդարանական վերահսկողության այս ձևը կազմակերպում և իրականացնում են խորհրդարանի մշտական հանձնաժողովները: Լսումների նպատակն է «ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և հրավիրել հասարակայնության, իշխանական կառույցների ուշադրությունը պետական քաղաքականության նշանակալի հարցերի վրա: Որպես կանոն, լսումներին հրավիրվում են գործադիր մարմինների ղեկավարները, հասարակական կազմակերպությունների և մամուլի ներկայացուցիչները, գիտնականները և փորձագետները»<sup>28</sup>: Քանի որ Առաջին հանրապետության երկու խորհրդարանների մշտական և ժամանակավոր հանձնաժողովների գործունեությանը վերաբերող փաստաթղթերը մեզ չեն հասել, ապա խորհրդարանական վերահսկողության այս ձևի հիմնախնդիրների պարզաբանումը հնարավոր է կատարել միայն նորմատիվ նյութի հիման վրա, այն է՝ խորհրդարանի կանոնակարգի: Համաձայն այդ օրենքի 30 հոդվածի, եթե խորհրդարանի հանձնաժողովը անհրաժեշտ համարեր լսելու կառավարության անդամի կամ այլ պաշտոնատար անձանց բացատրությունները կամ ստանալ ինչ-որ փաստաթղթեր, ապա այդ մասին պետք է հաղորդեր համապատասխան անձանց և հիմնարկներին, որոնք պարտավոր էին բավարարել նրա պահանջները: Բացի այդ՝ Առաջին հանրապետության խորհրդարանների հանձնաժողովները կարող էին խորհրդարանի նախագահի տեղեկությամբ հրավիրել «գիտակ անձանց»՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Այսպիսով, խորհրդարանական լսումների ինստիտուտը իրավաբանորեն կարգավորված և իրավական նորմալ բովանդակություն ունեցող ինստիտուտ էր: Ընդ որում, կառավարության անդամները կարող էին իրենց սեփական նախաձեռնությամբ խորհրդարանական հանձնաժողովներին ներկայացնել իրենց բացատրությունները կամ հանձնել ունեցած փաստաթղթերը:

**Մշտական և ժամանակավոր (քննիչ) հանձնաժողովների վերահսկողական գործունեությունը:** Ըստ «Հայաստանի խորհրդարանի հրա-

խարարի զեկուցումները խորհրդարանում 1918 թ. դեկտեմբերի 12-ին, 1919 թ. հունվարի 10-ին (զեկուցում այն հանդիպումների մասին, որ ունեցել է նախարարը Ալեքսանդրապոլում՝ Կարս մեկնող անգլիական զեներալ Ուոկկերի հետ: Այնուհետև կարողում է այն պայմանագրերը, որոնք ինքը կնքել է զեներալի հետ Կարս քաղաքի և շրջանի վարչաձևի վերաբերյալ), 1919 թ. հունվարի 25-ին (զեկուցում ընդունված, բայց չստորագրված այն տեղեկագրի մասին, որ ստացել է Վրաստանի հետ բանակցությունների գնացած ՀՀ պատվիրակությունից), 1919 թ. փետրվարի 11-ին և այլն:

<sup>28</sup> Տե՛ս **Енгибарян Р. В.**, նշվ. աշխ., էջ 319:

հանգի»՝ խորհրդարանը կարող էր ընտրել մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ: Մշտական հանձնաժողովները ստեղծվում էին հատուկ խնդիրներ կատարելու կամ միատեսակ օրինագծեր կամ հարցեր քննարկելու համար: Հանձնաժողովների խնդիրն էր նախնական մշակման ենթարկել խորհրդարանի իրավասության մեջ մտնող հարցերը: Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում էին որոշակի օրինագծեր կամ էլ հարցեր քննարկելու համար: Այսպիսով, խորհրդարանի նակազը հանձնաժողովներին հատուկ վերահսկողական լիազորություններով չէր օժտել: Հանձնաժողովն իր իրավասությանը հանձնված գործի (գործերի) վերաբերյալ կազմում էր զեկուցում, որում պիտի շարադրվեին գործի հանգամանքները, հանձնաժողովի հետազոտություններն ու դատողությունները և անպայման եզրակացություն՝ որպես խորհրդի որոշման նախագիծ: Այդ ընթացքում հանձնաժողովը կարող էր օգտագործել վերահսկողական մեկ այլ ձև՝ լսումներ, պահանջել գործադիրից անհրաժեշտ փաստաթղթեր: Այդպիսով, խորհրդարանական հանձնաժողովները դառնում էին հզոր վերահսկողական միջոց, որովհետև նրանց եզրակացությունները կարող էին լինել նաև «պարսավանքի բանաձևեր»: Այդպիսի իրավիճակ ստեղծվեց 1918 թ. նոյեմբերին, երբ քննիչ հանձնաժողովի զեկուցումը ստեղծեց «պարսավանքի բանաձևի» ընդունման վտանգ: Բացի այս ընդհանուր ընթացակարգից, երկու խորհրդարաններն էլ դիմել են շեղումների և ստեղծված մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներին տվել են լրացուցիչ իրավունքներ: Օրինակ՝ Հայաստանի խորհրդի որոշմամբ 1918 թ. ընթացքում գաղթականական, պարենավորման և բժշկասանիտարական հանձնաժողովները պարտավորեցվել էին շաբաթը մեկ անգամ զեկուցել խորհրդին իրենց ենթակա գործերի դրության մասին<sup>29</sup>: Սակայն, որպես կանոն, մշտական հանձնաժողովները խորհրդարանին զեկուցումներ էին տալիս ըստ անհրաժեշտության<sup>30</sup>:

Պարզ է, որ շաբաթական երկու նիստ գումարող խորհրդարանը չէր կարող ամեն շաբաթ լսել երեք հանձնաժողովների զեկուցումներն իրենց իրավասությանը ենթակա գործերի դրության մասին: Բայց, այնուամենայնիվ, Հայաստանի խորհուրդը ձգտում էր պահպանել այդ երեք հանձնաժողովների պարբերական զեկուցումների կարգը<sup>31</sup>: Այս հանձնաժողովների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք էական դեր խաղացին իրենց ոլորտներում խնդիրների լուծման, ապօրինությունների վերացման, օրենսդրական լուծումներ տալու գործում՝ ինչ-որ չափով կատարելով նաև գործադիրին բնորոշ գործառնություններ:

<sup>29</sup> Հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ կարգը խստիվ չէր կիրառվում: Այդ հանձնաժողովների զեկուցումները չեն կրել պարբերական բնույթ, այլ, երբ դա հնարավոր էր եղել:

<sup>30</sup> Օրինակ՝ սեպտեմբեր ամսին խորհրդարանին մեկական զեկուցումներ են տվել վերը նշված երեք հանձնաժողովները, ինչպես նաև ֆինանսական (պետության ֆինանսական դրության մասին), տեղական ինքնավարությունների (երևանի քաղաքային ինքնավարության կազմության մասին), պառլամենտական կամ քննիչ (էջմիածնում կատարված քննության արդյունքների մասին) հանձնաժողովները (տե՛ս «Ձանգ», 1918, 9 հոկտեմբերի, թիվ 60 (78), «Հայաստանի խորհրդարան (ամսական համառոտ տեսություն)»):

<sup>31</sup> Սեպտեմբերյան զեկուցումներից բացի, պարենավորման և բժշկասանիտարական հանձնաժողովները մեկական զեկուցումներ են ունեցել նաև 1918 թ. հոկտեմբերին (տե՛ս «Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 11-ի նիստի արձանագրությունը»):

Այսպիսով, Հայաստանի խորհրդի մշտական հանձնաժողովները էական դեր էին խաղում խորհրդարանական վերահսկողության կառուցակարգում: Սակայն տեղերում վիճակն այնքան վատթար էր, որ հանձնաժողովներն իրենց փոքրաթիվ անձնակազմով ուղղակի չէին կարողանում տանել այդ ծանրաբեռնվածությունը, հատկապես որ նրանց հանձնարարվում էր իրականացնել վերահսկողական այցեր, ստուգումներ և այլն: Դրանից ելքը Հայաստանի խորհուրդը գտավ հատուկ մշտական հանձնաժողովի ստեղծմամբ՝ հանձնաժողով, որը կոչվում էր «քննիչ», երբեմն նաև՝ «խորհրդարանական» կամ «հարցապնդումների»: Այն դեպքերում, երբ խնդիր էր առաջանում տեղում ստուգելու գործերի վիճակը, դա հանձնարարվում էր մշտական քննիչ հանձնաժողովին: Երբեմն էլ հարցապնդումների վերաբերյալ կառավարության պատասխանները չէին բավարարում պատգամավորներին, և «պարսավանքի բանաձևերից» խուսափելու համար կայացվում էր որոշում՝ հարցապնդմամբ բարձրացված խնդիրների ստուգումը հանձնարարել քննիչ հանձնաժողովին: Այդ հանձնաժողովը, ի տարբերություն այլ հանձնաժողովների, ձևավորված էր այլ հիմունքներով. նրա կազմում կար չորս անդամ՝ մեկական ներկայացուցիչ յուրաքանչյուր կուսակցական ֆրակցիայից<sup>32</sup>: Հենց այդ հանձնաժողովն էր, որ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ստուգելով Էջմիածնի գավառի իրավիճակը, իր զեկուցմամբ առաջացրեց կառավարական ճգնաժամ: Դրա հետևանքը եղավ կոալիցիայի անհրաժեշտության մասին խորհրդարանի որոշումը, այնուհետև՝ բուն կոալիցիան Հայ հեղափոխական դաշնակցություն և Հայ ժողովրդական կուսակցությունների միջև:

Մշտական հանձնաժողովները, հատուկ քննիչ հանձնաժողովի ստեղծումից հետո էլ շարունակում էին իրականացնել քննիչ հանձնաժողովին բնորոշ գործառույթներ<sup>33</sup>: Սակայն խորհրդարան հասնող բողոքների և զանգատների քանակն ահռելի էր, տեղերում չարաշահումների և ապօրինությունների չափերը ևս, ուստի 1918 թ. աշնանից խորհրդարանն անցավ ժամանակավոր քննիչ հանձնաժողովների ստեղծման պրակտիկային<sup>34</sup>:

Քննիչ ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծվել են նաև առանձին նախարարությունների՝ խորհրդարանին տված զեկուցումների կապակցությամբ: Այսպես, 1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստում խորհրդարանը կայացրել է հետևյալ որոշումը. «Լսելով Հայաստանի հանրային խնամատարության մինիստրի զեկուցումը Սուրմալու և Ղանարլու վերադարձող զաղթականության դրության մասին, Հայաստանի խորհուրդը որոշեց հիշյալ

<sup>32</sup> Տե՛ս «Ձանգ», 1918, 9 հոկտեմբերի, թիվ 60 (78), «Հայաստանի խորհրդարան (ամսական համառոտ տեսություն)»:

<sup>33</sup> 1919 թ. դեկտեմբերի 27-ին հարցապնդման կապակցությամբ մտքերի փոխանակությունից հետո խորհրդարանն ընդունեց դաշնակցական ֆրակցիայի բանաձևը. «Լսելով հարցապնդումը և պարենավորման մինիստրի զեկուցումը, խորհրդարանը հանձնարարում է պարենավորման հանձնաժողովին քննել պարենավորման բաժանմունքի հաշիվները և զեկուցել խորհրդարանին» («Հայաստանի խորհրդի 1919 թ. դեկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը», «Ձանգ», 1919, հունվար, թիվ 6):

<sup>34</sup> Հայաստանի խորհրդի հոկտեմբերի 25-26-ի նիստերի օրակարգում ներառված էր. «Ղարաքիլիսա պառլամենտական հանձնաժողով ուղարկելու հարցը» (տե՛ս «Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 25-ի և 26-ի նիստի արձանագրությունը», «Կառավարության լրաբեր», 1918, նոյեմբեր, թիվ 17):

շրջանները մի-մի հանձնախումբ ուղարկել տեղն ու տեղը ժանոթանալու և խորհրդարանին զեկուցանելու համար»<sup>35</sup>: Հաջորդ նիստում խորհրդարանը քննել է այդ հանձնաժողովների լիազորությունների հարցը: Խորհրդարանը վիճաբանությունների արդյունքում ընդունել է որոշում այն մասին, որ հիշյալ «հանձնաժողովներն իրավունք ունեն տեղում անել կարգադրություններ կառավարության միջոցով»<sup>36</sup>:

Հայաստանի խորհրդում 1919 թ. քննիչ հանձնաժողովների ստեղծման պրակտիկան զարգացում չստացավ, որովհետև, փաստորեն, խորհուրդն արդեն անդամալույծ մարմին էր դարձել: Հայաստանի պառլամենտում կառավարող կուսակցության գերիշխանության պատճառով քննիչ հանձնաժողովները չծավալվեցին: Սակայն դրանք, այնուամենայնիվ, ստեղծվում էին: Օրինակ, ինչպես 1918 թ., այնպես էլ 1919 թ. Դիլիջանի գավառից ստացվում էին բազմաթիվ դիմումներ և բողոքներ տեղի վարչական մարմինների գործունեության ու ժողովրդի ծանր վիճակի մասին, ուստի պառլամենտը որոշեց ստեղծել և Դիլիջան ուղարկել ժամանակավոր քննիչ հանձնաժողով, որը 1919 թ. դեկտեմբերի 29-ի նիստում խորհրդարանին զեկուցել է իր կատարած աշխատանքի արդյունքի մասին: Ձեկուցումը կազմելու համար հանձնաժողովը հանգամանորեն հետազոտել էր գավառի տնտեսական դրությունը, վարչական իշխանության կառույցը և գործունեությունը, դպրոցական գործը<sup>37</sup>:

Խորհրդարանական վերահսկողությունը և դրա ձևերն Առաջին հանրապետությունում պայմանավորված էին պետական կառավարման ձևով, այն է՝ խորհրդարանական հանրապետությամբ: Հանրապետությունում սահմանվել և գործել են համաշխարհային խորհրդարանական պրակտիկային հայտնի խորհրդարանական վերահսկողության համարյա բոլոր ձևերը, բացառությամբ ուղղակիորեն անվստահություն հայտնելու ընթացակարգի: Խորհրդարանական վերահսկողության ձևերը, հատկապես հարցապնդումները, կառավարության համար վտանգավոր փորձաքարեր էին, որովհետև դրանց հետևանքը կարող էր լինել «պարսավանքի բանաձևը», ինչին հետևելու էր կառավարության հրաժարականը: Հայաստանի խորհրդում ընդդիմությունն ամեն մի փոքր խախտում կամ հիմնախնդիր կարող էր դարձնել խորհրդարանական վերահսկողության առարկա՝ չնայած հարցն

<sup>35</sup> «Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստի արձանագրությունը», «Զանգ», 1919, հունվար, թիվ 2:

<sup>36</sup> Որոշումից բխում է, որ խորհրդարանում առաջարկ է եղել հանձնաժողովին նաև գործադիր լիազորություններ վերապահելու, ինչը, սակայն չի անցել (տե՛ս «Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 13-ի նիստի արձանագրությունը», «Զանգ», 1919, հունվար, թիվ 2):

<sup>37</sup> Ձեկուցումը բաղկացած էր հետևյալ մասերից՝ 1) վարչական իշխանություն, 2) գողություններ, 3) հողային վիճակը, 4) արոտատեղեր, 5) հաղորդակցություն, 6) դպրոցներ, 7) դրամի հարցը (տե՛ս «Հայաստանի պառլամենտի 1919 թ. դեկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը», «Յառաջ», 1920, հունվար, թիվ 4): Նույնպիսի հանձնաժողով ուղարկվել էր նաև Էջմիածին, որը ևս նույն օրը զեկուցել է խորհրդարանին Էջմիածինի կացության մասին: Ձեկույցը ներառում էր պարենավորման գործի, հողային հարցի, հարկահավաքության, որբանոցային գործի, կրթական գործի, դատական գործի, գործամասերի, ինքնավարությունների, հաշտարարական հարաբերությունների, կոմիսարների գործունեության ոլորտները (տե՛ս «Հայաստանի պառլամենտի 1919 թ. դեկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը», «Յառաջ», 1920, հունվար, թիվ 4):



իր եռթյամբ արժանի չէր խորհրդարանի ուշադրությանը: Հայաստանի խորհրդի օրակարգերում խորհրդարանական վերահսկողության առատությունը զգաստացնում ու զգոնացնում էր կառավարությանը: Վերջինս խորհրդարանում չունենալով կայուն մեծամասնություն, ամենայն պատասխանատվությամբ էր վերաբերվում դրանց, իսկ դաշնակցական ֆրակցիան փութով հետևում էր, որ ընդունված բանաձևերը չլինեին ի վնաս գործադիրի: Հայաստանի պառլամենտում իրավիճակն այլ էր: Խորհրդարանական վերահսկողության ձևերը կորցրել էին իրենց իրական ազդեցությունը և հետևաբար վտանգավորությունը կառավարող կուսակցության համար, որովհետև դաշնակցությունն ուներ կայուն, բացարձակ մեծամասնություն: Այդուհանդերձ, ընդդիմությունը նույնիսկ այդ անելանելի պայմաններում խորհրդարանական ինստիտուտներն օգտագործում էր քարոզչություն կամ քաղաքական խնդիրներ լուծելու համար: Հետևաբար, խորհրդարանական վերահսկողության ձևերի իրավական արդյունավետությունը կախված է խորհրդարանական ուժերի հարաբերակցությունից: Նույնիսկ պատմական կարճատև ժամանակաշրջանը, որում գոյություն է ունեցել Առաջին հանրապետությունը, հաստատում է խորհրդարանի իրավունքների սահմանափակման և գոյություն ունեցող վերահսկողության ձևերի օգտագործման կրճատման միտումը:

**АРТУР ВАГАРՇԻԱՆ – *Формы парламентского контроля в Первой Республике Армении.*** – Первая РА была парламентской республикой, и в ней применялись почти все формы парламентского контроля, известные мировой практике, за исключением вотума недоверия правительству. Некоторые из них, особенно запросы, были весьма действенны, поскольку предусматривали формулу порицания, что могло привести к отставке правительства. В первом парламенте – Совете Армении – оппозиция каждое мелкое нарушение или проблему превращала в предмет парламентского контроля, хотя по своей значимости они не заслуживали такого внимания. Правительство, не имевшее в парламенте устойчивого большинства, ответственно относилось к парламентскому контролю, а фракция правящей партии внимательно следила, чтобы решения парламента не ущемляли исполнительную власть. Во втором парламенте положение дел изменилось. Парламентский контроль потерял реальное значение и не угрожал правительству, поскольку правящая партия располагала квалифицированным большинством. Оппозиция, тем не менее, настойчиво использовала парламентские институты в пропагандистских или политических целях. Эффективность парламентского контроля зависит от соотношения сил в законодательном органе, и даже краткий опыт Первой республики подтверждает известную тенденцию к ограничению прав парламента и закрепленным формам его контроля.

**ARTHUR VAGHARSHYAN – *The Forms of Parliamentary Control in the First Republic of Armenia.*** – In the First Republic the parliamentary control and its forms were stipulated by the form of state management, that is – the parliamentary republic. Almost all forms of the parliamentary control known to the world parliamentary practice, except for the vote of no confidence in the Government, were introduced and administered in the First Republic. The forms of

parliamentary control, particularly the interpellations, became dangerous tools for the Government, as they could be a reason for a regulation of a reprobation, which would be followed by the dismissal of the Government. In the First Parliament of Armenia the opposition could make every petty infringement or issue an object to the parliamentary control, although it was not worthy to Parliament's attention. The abundance of the parliamentary control tools in the activities of the First Parliament of Armenia made the Government more vigilant and responsible. The latter, having no stable majority in the Parliament, was too watchful to the parliamentary control, and the leading (Dashnak) parliamentary faction kept vigilant watch over the parliamentary control resolutions not to cause harm to the executive authorities. The situation was different in the Second Armenian parliament. The forms of the parliamentary control had lost their real influence and, thus, the threat for the leading party, as the Dashnaks had stable, absolute majority. Anyway, even in this desperate situation the opposition used the parliamentary institutions for propaganda and political purposes. Thus, the efficiency of the forms of parliamentary control depends on the ratio of the parliamentary forces. Even the short historical era of the First Republic confirms the trend of limitation of the rights of the Parliament and restriction of the execution of its control tools.